ԴԱՎԻԹ ՋՈՒՀԱԿՅԱՆ
ԵՊՀ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1988 թ. փետրվարին սկիզբ առած Արցախյան շարժմանը զուգահեռ՝ անհրաժեշտություն առաջացավ գիտականորեն հիմնավորելու շարժման արդարացիությունը: Հրատարակվեցին նախ փաստաթղթերի ժողովածուներ[1], ապա՝ հետազոտություններ:

Առաջիններից էր 1988 թ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից ռուսերենով հրատարակված «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» աշխատությունը՝ Գ. Գալոյանի եւ Կ. Խուդավերդյանի խմբագրությամբ[2], որում հայկական, հունա-հռոմեական եւ այլ աղբյուրների հենքի վրա տրված է Արցախի պատմությունը, ժողովրդագրական նկարագիրը, ինքնորոշման իրավունքի կարեւորությունը: Գրքի հավելվածում ներկայացված են համապատասխան փաստաթղթեր:

Արցախի նախընթաց եւ հիմնախնդրի նոր փուլի պատմության վերաբերյալ առաջին աշխատանքներից է նաեւ Ա. Կարսեցու գիրքը[3], ինչպես նաեւ Վ. Հարությունյանի ժամանակագրական ժողովածուն[4], որտեղ զետեղված են Արցախյան շարժման (1988-1997 թթ.) վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերն ու մեկնաբանությունները:

Հայտնի պատմաբան Ն. Հովհաննիսյանը[5] հայ պատմագիտության մեջ առաջիններից էր, որ իր գրքում տվեց Արցախյան հիմնախնդրի պարբերացումը՝ 1. 1988-1990 թթ. («Հռչակագրերի ժամանակաշրջան»), 2.

---

[1] **Վ. Թովմասյան**, **Վ. Աթաջանյան**, **Յու. Ներսիսյան**, Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991. «Азербайджанская аргументация и ее опровержение», Ереван, 1989. «Нагорный Карабах», весна-осень 1990, Документы и материалы, Ереван, 1990. «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалы», Ереван, 1995:

[2] «Нагорный Карабах». Историческая справка, Ереван

[3] **А. Карсеци**, Конфликт между народами и пути их преодоления: к проблеме Нагорного Карабаха, Ереван, 1990.

[4] **В. Арутюнян**, События в Нагорном Карабахе. Хроника, ч. 1-6, Ереван, 1990-1997.

[5] **Н. Оганесян**, Карабахский конфликт. Этапы, подходы, варианты решения, Ереван, 1997.

1991-1994 թթ. («Ռազմական գործողությունների ժամանակաշրջան»), 3. 1994 թ. մինչեւ ներկա ժամանակը («Խաղաղ գործընթաց»)[6]*:*

Արցախյան շարժման հենց սկզբից մի շարք հոդվածներով եւ աշխատություններով հանդես եկավ Բ. Ուլուբաբյանը[7]*, ով դեռեւս 1960-ական թթ. կանգնած էր Արցախի պաշտպանության դիրքերում: Արցախի պատմությանը նվիրված աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է երկրամասի անցյալին՝ սկզբից մինչեւ 1994 թ.: Իսկ «Արցախյան գոյամարտի տարեգրություն» գրքում հեղինակը ներկայացնում է հիմնախնդրին նվիրված դեպքերը՝ 1988-1994 թթ. ընթացքում:*

Մեծ է նաեւ գրող-հրապարակախոս Զ. Բալայանի ներդրումն Արցախյան հիմնախնդրի ուսումնասիրման գործում, սակայն հեղինակի աշխատանքները[8] *ունեն գլխավորապես հրապարակախոսական բնույթ:*

Արցախյան հիմնախնդրի սկզբնական փուլի իրադարձությունները նկարագրող աշխատանքներով հայտնի է Բ. Կարապետյանը[9]*: Հեղինակը ներկայացնում է Արցախյան գոյամարտի բովով անցած գործիչներից վերցված հարցազրույցներ, որով գիրքը ձեռք է բերում աղբյուրագիտական արժեք:*

Արցախյան հիմնահարցը միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկել է Յ. Բարսեղովը[10]*: Նրա աշխատություններում բերված փաստերը հիմնավորում են, որ խնդրի արդարացի լուծմանը կարելի է հասնել ժողովրդավարական ճանապարհով:*

Արցախյան հիմնախնդրի 1988-1989 թթ. շրջափուլի առաջին ուսումնասիրություններից է Վ. Գրիգորյանի՝ 1994 թ. ռուսերենով հրատարա-

---

[6] Անդ, էջ 25-47:

[7] **Բ. Ուլուբաբյան**, Արցախյան գոյապայքարը, Երեւան, 1994. նույն հեղինակի՝ «Արցախյան գոյամարտի տարեգրություն», Երեւան, 1997, «Արցախի պատմությունը. Սկզբից մինչեւ մեր օրերը», Երեւան, 1994:

[8] **Զ. Բալայան**, Դժոխք եւ դրախտ, Երեւան, 1995. նույն հեղինակի՝ «Բժիշկ Մարությանը եւ նրա «Պատերազմի հետքը երկար է մնում», Երեւան, 1999:

[9] **Բ. Կարապետյան**, ...Եւ նրա շուրջ, Երեւան, 1990. նույն հեղինակի՝ «Անգլուհու արցախյան ողիսականը», Երեւան, 1994, «Արցախյան գոյամարտի համահավաք», մատենաշար I եւ II, Երեւան, 2008, մատենաշար III, Երեւան, 2009:

[10] **Ю. Барсегов,** Право на самоопределние-основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989. նույն հեղինակի՝ Самоопределение и территориальная целостность, Москва, 1993. նույն հեղինակի՝ «Народ Нагорного Карабаха-субьект права на самоопределение», Москва, 1993, «Нагорный Карабах в международном праве и мировой политике», том I, Москва, 2008, том II, Москва, 2009, «Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է», Երեւան, 1990:

կած աշխատությունը[11]. հեղինակը արխիվային վավերագրերի հիման վրա շարադրել է 1988-1989 թթ. Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցած իրադարձությունները, փորձել բացահայտել Արցախյան շարժման էությունն ու լուծման տարբերակները:

Գոյապայքարի արդարացիության գիտական հիմնավորումը արտացոլված է Վ. Խոջաբեկյանի գրքում[12], որում մեծ տեղ է հատկացված Ադրբեջանից հայերի բռնագաղթի եւ Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթի խնդիրներին: Հեղինակն իր աշխատության մեջ բացահայտում է Արցախյան շարժման ազատագրական բնույթը եւ վեր հանում արցախահայության ինքնորոշման իրավունքի էությունը: Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացված բռնաճնշումներին, դրանց ընթացքին եւ հետեւանքներին է վերաբերում նաեւ Գ. Ավագյանի գիրքը[13]:

1985-1991 թթ. բարդ ու հակասական ժամանակաշրջանի, Արցախյան շարժման ծավալման, Հայաստանի անկախացման գործընթացի ուսումնասիրմանն է վերաբերում Ռ. Ազիզբեկյանի աշխատանքը[14]: Հեղինակը մամուլում տեղ գտած փաստական նյութի եւ հրատարակված աշխատությունների հիման վրա շարադրում է 1985-1991 թթ. հայ ժողովրդի պատմության շրջադարձային էջերը. այս աշխատության մեջ բացահայտված են Արցախյան շարժման պատճառները:

1988 թ. փետրվարի 20-ի որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված, հատկապես՝ Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի իրադարձություններին է վերաբերում Կ. Ղահրամանյանի աշխատությունը[15]:

Արցախյան շարժման սկզբնական շրջանում մամուլում տպագրվեցին Խ. Բարսեղյանի՝ 1988-1990 թթ. իրադարձություններին վերաբերող հոդվածները, որոնք 1992 թ. լույս տեսան առանձին գրքով[16]. հեղինակը դեպքերի վերլուծությունը կատարում է՝ պատմական ենթախորքն ուսումնասիրելով:

Մեծ է Հ. Աբրահամյանի ներդրումը Արցախյան հիմնախնդրի ուսումնասիրման գործում, ով իր երկարատեւ աշխատանքների արդյունքում

---

[11] **В. Григорян**, Армения 1988-1989, Ереван, 1999.
[12] **Վլ. Խոջաբեկյան**, Արցախը փորձության ժամին, Երեւան, 1991:
[13] **Г. Авакян**, Нагорный Карабах: Ответ фальсификаторам, Ереван, 1991.
[14] **Ռ. Ազիզբեկյան**, Հայաստանը վերակառուցումից մինչեւ անկախություն. համառոտ ակնարկ, Երեւան, 1992:
[15] **Կ. Ղահրամանյան**, Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ., Երեւան, 1993:
[16] **Х. Барсегян**, Истина дороже. К броблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1992.

հրատարակեց երեք հատորից բաղկացած «Մարտնչող Արցախը (1917-2000)» աշխատությունը[17]*: Խնդրո առարկա թեմային են վերաբերում երրորդ հատորի առաջին երկու գլուխները: Առաջին գլխում նկարագրվում է 1985-ից մինչեւ 1988-ի գարունը արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքը, ինչպես նաեւ հանգամանորեն շարադրված է պայքարի սկզբնավորման պատմությունը: Հեղինակը հավաստի նյութերի հիման վրա փորձում է հիմնավորել, որ Արցախյան շարժումն սկսվել է ոչ թե 1988-ի փետրվարից, ինչպես այդ մասին ակնարկում են շատերը, այլ 1985-ին՝ գորբաչովյան «վերակառուցման» շրջանում: Ուսումնասիրության երկրորդ գլուխը անդրադառնում է 1988-ի գարնանից մինչեւ 1991-ի սեպտեմբերի սկիզբը տեղի ունեցած իրադարձություններին:*

Հ. Աբրահամյանի՝ Արցախյան հիմնախնդրին նվիրված հաջորդ աշխատությունը «Արցախյան գոյամարտ» գիրքն է[18]*, որում հեղինակն անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ 1917 թվականից սկսյալ: Մեզ հետաքրքրում են «Գոյապայքարը շարունակվում է» խորագրի ներքո բերված նյութերը, որոնցով հեղինակը հիմնավորված մեկնաբանություններով ներկայացնում է արցախահայության ծանր իրավիճակը*[19]*: Գիրքն ունի հավելված, որտեղ ներկայացված են Արցախյան գոյամարտին վերաբերող փաստաթղթեր: Հ. Աբրահամյանն ունի Արցախյան շարժմանը նվիրված նաեւ այլ աշխատություններ*[20]*:*

Կարեւոր է նաեւ Ա. Արշակյանի աշխատությունը[21]*, որը շարադրված է արխիվային փաստաթղթերի, մամուլի, նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների հենքի վրա եւ լուսաբանում է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները, այդ պայքարի շուրջ ուժերի համախմբումը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում, ինչպես նաեւ չհայտարարված պատերազմի առաջին շրջանում հայկական կողմի հաղթանակները:*

Քննարկվող խնդրին անդրադարձած հեղինակներից է Շ. Մկրտչյանը[22]*: Վերջինիս աշխատության մեջ ներկայացված է Արցախի ամբող-*

---

[17] **Հ. Աբրահամյան**, Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Ա. (1917-1923), Երեւան, 2003, գիրք Բ. (1923-1985), Երեւան, 2005, գիրք Գ. (1985-2000), Ստեփանակերտ, 2007:

[18] **Հ. Աբրահամյան**, Արցախյան գոյամարտ, Երեւան, 1991:

[19] Անդ, էջ 70:

[20] **Հ. Աբրահամյան**, Երբ Հայրենիքը վտանգի մեջ է, Երեւան, 1997. նույն հեղինակի՝ «Ճակատագրին ընդառաջ», Երեւան, 2001:

[21] **Ա. Արշակյան**, Արցախյան գոյապայքար (1985-1992 թթ.), Երեւան, 2004:

[22] **Շ. Մկրտչյան**, Արցախ, Երեւան, 1991:

ջական պատմությունը: Գրքում խոսվում է նաեւ Ադրբեջանի հակահայ քաղաքականության եւ հայերի ջարդերի մասին: Հատկապես ուշագրավ է հավելվածը՝ «Արցախյան ազատագրական պայքարի պոռթկման ժամանակագրությունը. փետրվար 1988 թ.»:

Կան նման այլ աշխատություններ[23] եւ հուշագրություններ[24] եւս, որոնք, սակայն, ունեն գլխավորապես աղբյուրագիտական նշանակություն: Դրանց թվում են Ա. Պետրոսյանի աշխատանքը՝ նվիրված Արցախյան շարժման նշանավոր գործիչ Արթուր Մկրտչյանի կյանքին ու գործունեությանը, եւ Գ. Գրիգորյանի «Ղարաբաղյան օրագիր (1988-2002)»-ը, որտեղ ներկայացվում են վերջինիս նամակներն ու հեռագրերը՝ ուղղված Խորհրդային Միության ղեկավար եւ հասարակական շրջանակներին:

Արցախյան հիմնախնդրի պատմության մեջ մեծ նշանակություն ունի հայերի՝ Ադրբեջանում տեղի ունեցած ցեղասպանության ուսումնասիրման խնդիրը: Այս իմաստով կարեւոր է հիշել Ա. Սախարովի աշխատությունը[25], որտեղ ներկայացված են նաեւ հեղինակի տեսակետերն ու մամուլում տպագրված նյութերը: Ս. Զոլյանի եւ Հ. Միրզոյանի աշխատության[26] մեջ եւս, ի թիվս այլ հարցերի, վերլուծության են ենթարկվում հատկապես Սումգայիթի եւ Կիրովաբադի ջարդերը: Նմանապես՝ Ս. Զոբանյանի կազմած փաստավավերագրական ժողովածուն[27] ապացույցներ է ներկայացնում հայերի՝ Ադրբեջանում իրականացված Ցեղասպանության մասին: 1990 թ. Բաքվի հայերի հունվարյան ջարդերին է վերաբերում Ի. Մոսեսովայի եւ Ս. Հովնանյանի գիրքը[28], իսկ Լ. Մելիք-Շահնազարյանն իր ուսումնասիրություններով[29] ամբողջացնում է Ադրբեջանի հակահայ քաղաքականության դրսեւորումների նկարագրությունը: Դրանցում ակա-

---

[23] **Ս. Մելքումյան**, Լեռնային Ղարաբաղի հանրապետություն, Երեւան, 1997. **Ա. Հակոբջանյան**, Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երեւան, 2001. **Լ. Մկրտչյան**, Արցախ-Ղարաբաղը իր անցյալով եւ ներկայով, Աթենք, 1988. **Ա. Манасян**, Карабахский конфликт: ракурсы правового подхода, Ереван, 1997. **С. Золян**, Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2002:

[24] **Գ. Գրիգորյան**, Ղարաբաղյան օրագիր (1988-2002), Երեւան, 2005. **Ա. Պետրոսյան**, Արթուր Մկրտչյան, Երեւան, 2004:

[25] **А. Сахаров**, О Нагорном Карабахе, Ереван, 1996.

[26] **С. Золян, Г. Мирзоян,** Нагорный Карабах и вокруг него: глазами независимых наблюдателей (сборник материалов), Ереван, 1991.

[27] **С. Чобанян**, Государственно-организованный терроризм, SOS! Геноцид армян 1988-1991 гг., Ереван, 1992.

[28] **Ի. Մոսեսովա**, **Ա. Հովնանյան**, Բաքվի ջարդերը, Երեւան, 1994:

[29] **Լ. Մելիք-Շահնազարյան**, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երեւան, 1988. նույն հեղինակի՝ «Гандзак. Неутраченный мир (запоминание очевидца)», Степанакерт, 1996:

նատեսների վկայություններով են ներկայացվում Գանձակի եւ Սումգայիթի 1988 թ. ջարդերի մանրամասները[30]: Սումգայիթյան ջարդերում ադրբեջանական իշխանությունների անմիջական մասնակցությունն են բացահայտում Հ. Ուլուբաբյանի, Ս. Զոլյանի եւ Ա. Արշակյանի աշխատությունը[31] եւ մի շարք այլ հրապարակումներ[32]:

Արցախյան հիմնախնդրի սկզբնական փուլը ներկայացված է նաեւ ընդհանուր բնույթի աշխատություններում[33], որոնցից առանձնացնենք Ռ. Գալիչյանի անգլերեն աշխատությունը[34] եւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան, ապագան» հոդվածների ժողովածուն[35]:

Ամփոփելով՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեեւ Արցախյան շարժումը վերաբերում է հայոց նորագույն պատմության ամենավերջին շրջանին, սակայն արդեն սեղանի վրա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փորձում են գնահատել ոչ հեռու անցյալի պատմությունը: Չնայած արտահայտված տեսակետերից շատերը դեռ կարիք ունեն վերահաստատվելու եւ ճշտվելու, սակայն ակնհայտ է, որ մեծ գործ է արված արցախյան ազատամարտի փաստագրման եւ ուսումնասիրման առումով:

---

[30] **Լ. Մելիք-Շահնազարյան**, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, էջ 21-22:

[31] **Г. Улубабян**, **С. Золян**, **А. Аршакян**, Сумгаит…Геноцид…Гластность, Ереван, 1989.

[32] **Բ. Կարապետյան,** Սումգայիթյան օրագիր, Երեւան, 2013. **К. Кокс, Д. Айбнер,** Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998. С. Вермишева, Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь 1991 г., Ереван, 1995. «Заключение комитета Верховного Совета РСФСР по итогам слушаний, посвященных конфликтам в ряде районов Азербайджанской республики и Республики Армения (конец апреля-май 1991 года)», Ереван, 1992. «Геноцид армян в Азербайджане», Степанакерт, 1998. «Анексия и депортация», Степанакерт, 1998. «Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита», Степанакерт, 1998. «Сумгаитский синдром: анатомия рассизма в Азербайджане», Ереван, 2012:

[33] **Վ. Բալայան**, Արցախի պատմություն, Երեւան, 2002. **Ալ. Մանասյան**, **Ա. Ղեւոնդյան**, Լեռնային Ղարաբաղ. Ինչպես է դա եղել..., Երեւան, 2011:

[34] **R. Galichyan**, The invention of history: Azerbayjan, Armenia and the showcasing of imagination, London, Yerevan, 2009.

[35] «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան եւ ապագան (միջազգային գիտաժողովի զեկույցների հիմնադրույթները)», խմբ.՝ Ա. Սիմոնյան, Հ. Հովհաննիսյան, Երեւան, 2007. այստեղ հատկապես կառանձնացնեինք Արտակ Դաբաղյանի հոդվածը (**Ա. Դաբաղյան**, Արցախյան հակամարտության հայկական կողմի մարդկային կորուստները 1988-1991 թթ., էջ 299-312), որում հեղինակը ներկայացնում է հայկական կողմի զոհերն ըստ տարեթվերի, վայրերի, ինչպես նաեւ զոհվելու հանգամանքների ու սպանությունն իրականացնողների:

РЕЗЮМЕ

Решением 20-ого февраля 1988 года о воссоединении Арцаха с Арменией открылись новые и полные испытаний времена в истории армянского народа. Освещение проблем, касающихся этого важного периода, необходимо в армянской историографии. Исследования на эту тему начались с первых же дней Карабахского движения и выявили разные стороны вопроса. Но надо также отметить, что в этих работах есть некоторые упущения, которые требуют специального внимания исследователей в будущем.

SUMMARY

The decision of February 20, 1988 on reunion of Artsakh with Armenia was the beginning of a new phase in the history of the Armenian people, full of challenges. It is necessary to investigate that important period. The process of researching started right in the first days of the Artsakh movement. Various investigations towards the question were carried out, which elucidate different aspects of the issue. However, it is worth mentioning, that there are some gaps in the research which wait for the attention of specialists in the future.